ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԸ ՀՅՈՒՐԸՆԿԱԼԵԼ ԷՐ ԹԻՎ 128 ԴՊՐՈՑԻ ՍԱՆԵՐԻՆ

15.09.2021 16:28

14.09.2021թ-ին ՀՀ փաստաբանների պալատը հյուրընկալել է Լև Տոլստոյի անվան թիվ 128 հիմնական դպրոցի 9-րդ դասարանի սաներին:

ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքում՝ երեխաները հանդիպել են Փաստաբանների պալատի նախագահի առաջին տեղակալ Հարութ Ակլունցի հետ:

Երեխաների հետ զրույցի ընթացքում Հարութ Ակլունցը պարզ օրինակներով խոսել է արդարադատության համակարգում փաստաբանի կարևոր ու անփոխարինելի դերի մասին, պատասխանելով երեխաների հարցերին, պարզաբանել է, թե ի՞նչ է անմեղության կանխավարկածը, ի՞նչ իրավունքներ ունի մարդը, երբ նրան ձերբակալում կամ մեղադրանք են առաջադրում և այլն:

Հարութ Ակլունցը որպես ավագ ընկեր, երեխաներին խորհուրդ է տվել լավ սովորել և հավատալ սեփական ուժերին:

Երեխաները շրջել են նաև Հանրային պաշտպանի գրասենյակում, որտեղ ՀՊԳ ղեկավարի առաջին տեղակալ Լուսինե Սարգսյանը ներկայացրել է հանրային պաշտպանների գործունեությունը և դատական գործերում նրանց կողմից ներկայացուցչություն կամ պաշտպանություն իրականացնելու պայմանները, խոսելել է հանրային պաշտպանների կողմից մարդկանց իրավունքները պաշտպանելու կարևորության մասին:

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })